ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մայիսի 9-ի՝ Հաղթանակի օրվա առիթով շնորհավորական նամակ է հղել ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին, որում մասնավորապես ասվում է.

Մեծարգո Նախագահ,

Հայրենիքից հեռու՝ հոգով խնդակից Ձեզ և Արցախի ազատատենչ մեր ժողովրդի զավակներին բերում ենք Մեր շնորհավորանքները Ձեզ և Արցախի բարեպաշտ հայորդիներին Հաղթանակի օրվա առիթով: Մեր ժողովուրդը բազմադարյա իր պատմության ընթացքին ազատասիրության անանման ոգով ու լույս իր հավատքով է հարատևել: Շուշիի ազատագրումը կարևորագույն հանգրվաններից է հայոց պատմության, որով հայորդիներ վերապրեցին հաղթանակի հերոսականությամբ ապրած իրենց նախնյաց բերկրանքը:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է առ Երկնավոր Տերը, որպեսզի Բարձրյալն Աստված հանապազ օրհնի մեր ժողովրդի զավակաց ի Հայաստան, հԱրցախ և ի Սիւնիս աշխարհի՝ պարգևելով նորանոր հաղթանակներ և հաջողություններ՝ ի փառս Աստուծո և ի շինություն մեր Հայրենյաց:

Ս. Էջմիածին,
9 մայիսի 2004 թ.